ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0026, Գ.Նժդեհի 23/1, հեռ. 015400210
Էլ. փոստ info@probation.am

N/29.1.5/63153-2025
« 12 » սեպտեմբերի 2025թ.

«ՏԵՔՍՏԻԼ ՓԻՓ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ/ՏԻԿԻՆ Կ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻՆ
/ք.Երևան, Բաղյան 1 նրբ. 3շ. 46բն, հեռ.՝ +37493454747,+37493454747 +37493454747 +37493454747Էլ հասցե՝ piptextile2022@mail.ru /

Հարգելի՛ տիկին Սողոմոնյան,

ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության կարիքների համար իրականացված համազգեստի ձեռքբերման ՀՀՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/9 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել Ձեր կազմակերպությունը՝ «Տեքստիլ Փիփ» ՍՊԸ-ն, որի հետ 2025 թվականի հունիսի 18-ին կնքվել է ՀՀՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/9-1 ծածկագրով ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), իսկ 2025 թվականի հուլիսի 9-ին ֆինանսական միջոցների հատկացման վերաբերյալ համաձայնագիր:

Սակայն սահմանված ժամկետում՝ մասնավորապես 2025 թվականի օգոստոսի 8-ը ներառյալ մասնակիցը ապրանքը չի մատակարարել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և Պայմանագրի 2.1.7 կետով սահմանված պահանջները՝ հայտնում ենք, որ «Տեքստիլ Փիփ» ՍՊԸ-ի հետ կնքված ապրանքի մատակարարման ՀՀՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/9-1 ծածկագրով պայմանագիրը 2025 թվականի սեպտեմբերի 11-ից միակողմանի լուծվել է:

Հիմք ընդունելով ներկայացված միակողմանի հաստատված տուժանքների 1.8 կետերով սահմանված պահանջները՝ առաջարկում ենք 10 աշխատանքային օրվա ընթացում՝ մինչև ս.թ. 2025 թվականի սեպտեմբերի 25-ը ներառյալ, ապահովել տուժանքների, մասնավորապես որակավորման ապահովում՝ 486,000.00 (չորս հարյուր ութսունվեց հազար) ՀՀ դրամի չափով և պայմանագրի կատարման ապահովում՝ 324,000.00 (երեք հարյուր քսանչորս հազար) ՀՀ դրամի չափով գումարների փոխանցումը՝ Պատվիրատուին:

Վերոնշյալի վերաբերյալ ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունը դիմել է նաև Ձեր կազմակերպությանը սպասարկող բանկին՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ գանձումների անհնարինության դեպքում ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունը վերոգրյալի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրելու է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

Հարգանքով՝

9/12/2025

Ձ

ԱՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Подписано: GEVORGYAN ANI 7311890551 **ԱՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ**